Թեստ

1.Ըստ «Սասնա ծռեր» էպոսի համահավաք բնագրի՝ ի՞նչ պայման են կապում Մեծ Միերը և Մըսրա Մելիքը:

ա.Ով հաղթի մենամարտում, նա դառնա և՛ Սասունի, և՛ Մըսրա թագավոր:

բ.Ով շուտ մեռնի, նրա ընտանիքին տիրություն անի մյուսը:

գ.Ով կարողանա հաղթել Սպիտակ Դևին, մյուսը նրան հարկ վճարի:

դ.Ում տերությանը վտանգ սպառնա, մյուսը նրան օգնության հասնի:

2.Էպոսում ինչպե՞ս է ավարտվում Դավթի ու Մելիքի մենամարտը:

ա.Դավիթը Թուր Կեծակիով մեջտեղից երկու կես է անում Մելիքին:

բ.Դավիթը կոտորում է Մելիքի բանակը, և Մելիքը սարսափահար փախչում է:

գ.Դավիթը իր զարկերը բաշխում է Մելիքի մորն ու քրոջը, և մենամարտ տեղի չի ունենում:

3.Էպոսում ո՞ր հերոսն է ծնվում՝ ձեռքի ափում մի կաթիլ արյուն սեղմած:

1. Բաղդասարը 2. Մեծ Միերը 3. Դավիթը 4. Փոքր Միերը

4.Պնդումներից ո՞րն է սխալ Դավթի վերաբերյալ:

1.Սպանում է Սպիտակ Դևին և առյուծին երկու կես անում:

2. Վերաշինում է Մարութա վանքը և պատժում է Մելիքի հարկահաններին:
3. Կռվում է Խանդութի հոր թշնամիների դեմ և ոչնչացնում նրանց:
4. Սպանում է Մըսրա Մելիքին և նրա պարտված զորքը ազատ արձակում:

5.**Էպոսի ո՞ր հերոսուհին է , որ Քուռկիկ Ջալալին հեծած, մի քանի տարի քաջաբար հսկում ու կառավարում է երկիրը:**

1.Ծովինարը 2.Դեղձուն-Ծամը 3. Խանդութը

6.Էպոսի նշված հերոսներից ո՞րը ում կինն է:

1.Դեղձուն-Ծամ ա.Սասունցի Դավիթ **2.Արմաղան բ.Փոքր Միեր**

3.Խանդութ գ.Մեծ Միեր **4.Գոհար դ.Սանասար**

1-գ,2-բ,3-դ,4-ա 1-դ,2-գ,3-ա,4-բ 1-դ,2-ա,3-գ,4-բ

7.Բաղդադում ու՞մ գերեզմանին է այցելում Փոքր Միերը էպոսում:

1.Գագիկ թագավորի 2. Բաղդասարի 3.Քեռի Թորոսի 4. Ձենով Օհանի

LIVEWORKSHEETS

LIVEWORKSHEETS